

## ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆԻԶՄԻ ՋԵՐՄԱՀԱՂՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու օրգանիզմի տարբեր հյուսվածքների և օրգանների ջերմահաղորդականությունները նույնը չեն: Օրինակ՝ հյուսվածքային հեղուկի և արյան ջերմահաղորդականությունը քիչ է տարբերվում ջրի, իսկ շարակցական և ճարպային հյուսվածքներինը՝ օդի ջերմահաղորդականությունից: Մկանները լավ, իսկ ոսկորները՝ էլ ավելի լավ ջերմահաղորդիչ են, քան օդը: Շնորհիվ հյուսվածքային հեղուկի և արյան բարձր ջերմահաղորդականության՝ մարմնի բոլոր ներքին օրգանների ջերմաստիճանը պահվում է հաստատուն և միատեսակ: Մաշկը և ենթամաշկային ամբողջ թաղանթանյութը, շնորհիվ ցածր ջերմահաղորդականության, ծառայում են որպես ջերմամեկուսիչ շերտ և օրգանիզմը պահպանում են սաստիկ սառչելուց: